Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 19-ից 21-ը

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, նոյեմբերի 19-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի դաշնային հարկային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի (ՀԾՂՀԽ) 26-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

2019թ. նստաշրջանի հիմնական քննարկման թեման էր «Թվային տնտեսության պայմաններում հարկային վարչարարության իրականացումը»:

Համակարգող խորհրդի նստաշրջանի ընթացքում քննարկվել են նաև հետևյալ հարցերը, մասնավորապես.

- ՀԾՂՀԽ կազմում փոփոխություններ կատարելու մասին,

- 2017-2018թթ. ՀԾՂՀԽ աշխատանքային ծրագրի կատարման և ՀԾՂՀԽ փորձագետների նիստի արդյունքների մասին,

- Մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության երրորդ փուլի իրագործմանն ուղղված միջոցառումների ծրագրի կատարման ընթացքը,

- ԱՊՀ մասնակից պետությունների հարկերի և հարկման ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման բազային կազմակերպությունների հաշվետվության մասին,

- «ԱՊՀ մասնակից պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրության մասին,

- ԱՊՀ ՀԾՂՀԽ միջազգային համագործակցության և հարկ վճարողների հետ աշխատանքների գծով աշխատանքային խմբի կանոնակարգը հաստատելու մասին,

- 2018-2019թթ. ՀԾՂՀԽ աշխատանքային ծրագրի, օրակարգի նախագծի, ՀԾՂՀԽ 27-րդ նիստի անցկացման ժամկետի և վայրի մասին,

- ՀԾՂՀԽ նախագահի ընտրության մասին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համակարգող խորհրդի նստաշրջանի ընթացքում Հայաստանի հարկային մարմնի պատվիրակությունն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել նիստի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի աշխատանքային քննարկումներին՝ ներկայացնելով քննարկվող հարցերի շուրջ ՀՀ ՊԵԿ-ի պրակտիկան:

Նստաշրջանի հիմնական թեման նվիրված է եղել թվային տնտեսության ազդեցությանը ԱՊՀ մասնակից պետություններում հարկման համակարգի զարգացման վրա: Մասնակիցները քննարկել են, թե ինչպես է թվային տնտեսությունն ազդում հարկերի վրա և ինչ փոփոխություններ կարելի է սպասել ապագայում: Պատվիրակությունները միմյանց հետ փոխանակվել են իրենց փորձով նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու բնագավառում:

ՊԵԿ նախագահի տեղակալ Մ.Փաշայանը հանդես է եկել շնորհանդեսով, որում նշել է, որ ՀՀ-ում արդեն իսկ հարկ բառն ընկալվում է որպես ներդրում ընդհանուր գործի մեջ, և այդ մտածելակերպը գնալով արմատավորվում է հասարակության գիտակցության մեջ: ՀՀ պատվիրակության ղեկավարը խոսել է այդ վերաբերմունքի տարածման անհրաժեշտության մասին նաև գործընկեր երկրներում՝ հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհուրդը համարելով այդօրինակ տեսլականի քննարկման պատեհ հարթակ:

Հրապարակման ենթակա է

Քննարկվել են նաև հարկային մարմինների թվային փոխակերպման արդի տենդենցներին հետևելու, հարկային վարչարարության բարելավման և բիզնեսի հետ աշխատանքի պարզեցման հարցեր:

Նիստի ընթացքում ընդգծվել է ԱՊՀ երկրների հարկային մարմինների միջև փոխգործակցության կարևորությունը տեղեկատվության փոխանակման առումով: 2018թ. նոյեմբերի 2-ին ք.Աստանայում ստորագրվել էր «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրությունը (Արձանագրությունը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի թիվ N1413-Ա որոշմամբ): Հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի աշխատանքային խումբն արդեն մշակել և հաստատել է տեղեկատվության փոխանակման ձևաչափեր, ինչը հնարավոր կդարձնի ստեղծել ծրագրակազմ և անցկացնել տեղեկատվության թեստային փոխանակում 2020 թվականի օգոստոսին, իսկ 2021 թվականին համակարգն արդեն կգործարկվի:

Նստաշրջանի շրջանակներում կայացել են երկկողմանի հանդիպումներ ԱՊՀ մասնակից պետությունների հարկային մարմինների ղեկավարների հետ, այդ թվում՝

- Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ղեկավար Մ.Միշուստինի,
- Ղազահստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների նախագահ Մ.Սուլտանգազիևի,
- Տաջիկստանի հարկային կոմիտեի նախագահ Ն.Դավլաթզոդայի,
- Ուզբեկստանի Հանրապետության պետական հարկային կոմիտեի նախագահ Բ.Մուսաևի,
- Բելառուսի Հանրապետության հարկերի և գանձումների նախարարի տեղակալ Է.Սելիցկայայի,
- Մոլդովայի Հանրապետության պետական հարկային ծառայության տնօրենի տեղակալ Յու.Լիկիի,
- Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պետական հարկային ադմինիստրացիայի ղեկավարի տեղակալ Ժ.Ժունֆայի,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էկոնոմիկայի և ֆինանսական քաղաքականության նախարար Տ.Ժակսըլըկովի,
- Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության գործադիր քարտուղար Ֆ.Իմրեչեի,

Հրապարակման ենթակա է

- Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսական հարաբերությունների դեպարտամենտի հարկային վարչարարության բաժնի ղեկավար Խ.Տորոյի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համակարգող խորհրդի նստաշրջանի արդյունքներով ստորագրվել է արձանագրություն (կցվում է):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի մասնակցության արդյունքներով առաջարկվում է՝

- ընդգրկել ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի 26-րդ նստաշրջանի արձանագրության կատարումը ՀՀ ՊԵԿ աշխատանքային ծրագրում,
- ավարտին հասցնել հարկային վարչարարության իրականացման համար ԱՊՀ մասնակից պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին արձանագրության ուժի մեջ մտնելու հետ կապված աշխատանքները,
- ապահովել ԱՊՀ մասնակից պետությունների Հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի 27-րդ նստաշրջանում ներկայացվող թեմայով («ԱՊՀ մասնակից պետություններում հարկային որոշակիության բարձրացում») ՀՀ ՊԵԿ կողմից շնորհանդեսի պատրաստումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

25.11.2019թ.